ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք,
5-փ 7, Հեռ. 2-42-26 , nonik.melkonyan@mail.ru

N 1/104
27 օգոստոս 2015թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ՝

Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը համայնքի բնակչությանը՝ էլեկտրոնային տարբերակով:

Առդիր՝ <<3 թերթ>>:

Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ՝ Հ. Բաղդասարյան
Հեռ. 091-80-06-08

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

01.01.2014թ.- 31.12.2014 թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՈՂՋԱԲԵՐԴ 2015Թ

Հարգելի Ողջաբերդցիներ 2014 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2013 թվականի դեկտեմբերի 26-ին համայնքի ավագանին իր 32-Ն որոշմամբ ընդունել է 2014 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 18 միլիոն 267 հազար 500 դրամ, ծախսերը՝ 17 միլիոն 610 հազար 200 դրամ:Պակասորդը կազմել է 657 հազար 300 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին:
Հողի վարձավճար, 2014 թվականի համար, գանձվել է 401 հազար 600 դրամ, որը կազմել է տարեկան պլանի 100.4%-ը:
2014 թվականի գույքային հարկերը հավաքագրվել են 131%-ով ,որը բացարձակ թվով կազմել է 1 միլիոն 932 հազար դրամ:

- **ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հնկողություն է իրականացվել առևտրի , հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ:Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 6 թույլտվություն, որոնցից գնաձվել են համապատասխան տուրքի գումարները,որը բացարձակ թվով կազմել է 96 հազար դրամ:

- **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայանքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է:Համայնքի անապահով, ինչպես նաև Արցախյան ազատամարտիկների ընտանիքներին տրվել է 885 հազար դրամի օգնություն:

- ## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ողջաբերդի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանցիներին առաջին զանգի կապակցությամբ տրվել են նվերներ,որի համար ծախսվել է 50 հազար դրամ, իսկ ավարտական դասարանի աշակերտներին տրվել են նվերներ՝ գումարի տեսքով՝ 10 հազարական դրամներ:Ամանորին դպրոցի տարրական դասրանի աշակերտների համար պատրաստվել են նվերներ, որի համար ծախսվել է 100 հազար դրամ, ինչպես նաև տարրական դասարանների աշակերտներին բաժանվել են մանկական թատրոնի տոմսեր՝ 60 հազար դրամի չափով:
Մայիսյան եռատոնին համայնքի բնակիչների հետ կազմակերպվել է միջոցառում,որի համար ծախսվել է 100 հազար դրամ:

- ## ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Փողոցների աղբահանության համար ինչպես յուրաքանչյուր տարի, անյպես էլ 2014 թվականին փոխանցվել է 100 հազար դրամ գումար:Համայնքապետարանի նախաձեռնությամբ համայնքի տարածքում կազմակերպվել է խմելու ջրի ջրագծերի վերանորոգում: